ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կատարող՝ Մեծ Սեպասարի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցիչ

Սվետլանա Սողոյան

Աշխարհագրություն առարկայի վերապատրաստման պատասխանատու՝

աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ Գայանե Ավետիսյան

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ 1. Արտադասարանական և արտադպրոցական պարապմունքների կազմակերպումը հանրակրթական դպրոցում……..……..……4

Գլուխ 2. Էկոլոգիական կրթության արտադասարանական դաստիարակությունը դպրոցականների տարբեր տարիքային խմբերի համար……..…….....7

Գլուխ 3. Աշխարհագրության ուսուցման կազմակերպման արտադասարանական և արտադպրոցական ձևերը…….....14

Եզրակացություն …….....22

Գրականություն …….23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արտադասարանական աշխատանքները, լինելով դասագործընթացի օրգանական շարունակությունը, նպաստում են սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորմանը, գիտելիքների խորացմանն ու հարստացմանը: Դրանք օգնում են ուսումնական առարկայի դաստիարակչական հնարավորությունների ավելի լրիվ օգտագործմանը, ուսուցչին լայն հնարավորություններ են ընձեռում ուսուցումն ավելի սերտորեն կապելու կյանքին, նպաստավոր պայմաններ են ստեղծում դպրոցականների իմացական հետաքրքրությունների զարգացման, նրանց մեջ գիտելիքներն ինքնուրույնաբար լրացնելու հմտությունների ձևավորման, հանրակրթական կարողություններով և հմտություններով զինելու համար:

Թեմայի արդիականությունը - Այսօր շատ կարևոր է դպրոց-պրակտիկա կապի ապահովումը: Իսկ արտադասարանական ուսուցումը կարևոր է պրակտիկայի ձեքբերման համար: Անհրաժեշտ է, որ աշակերտը ինքը ճանաչի շրջակա միջավայրը, ինքը կատարի փորձեր և հասկանա բնության մեջ տեղի ունեցող երևույթների պատճառները:

Աշխատանքի նպատակը- Արտադասարանական ուսուցումը տարբեր տարիքի երեխաների մոտ տարբեր մոտեցումներ է պահանջում, ուստի և կարևոր նպատակ է՝ բացահայտել տարրական, հիմնական, ավագ պրոցներում արտադասարանական պարապմունքների դերն ու նշանակությունը աշխարհայացքի, աշխարհագրական մշակույթի ձևավորման գործում:

ԳԼՈՒԽ 1

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Արտադասարանական և արտադպրոցական դաստիարակությունը ՀՀ-ում հանրակրթության կարևոր օղակներից է: Նրա նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպումն է, նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական և տեղեկատվական գիտելիքների ձեռքբերմանը նպաստելը:

Արտադպրոցական դաստիարակությունն իրականացվում է մանկապատանեկան կազմակերպությունների, ստեղծագործական, գեղագիտական, տեխնոլոգիական կենտրոնների, երաժշտական, նկարչական արվեստի դպրոցների, ակումբների, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և զբոսաշրջային կայանների, մարզադպրոցների, մարզաառողջարարական ճամբարների և այլ կազմակերպությունների միջոցով:

Արտադասարանական աշխատանքները, լինելով դասագործընթացի օրգանական շարունակությունը, նպաստում են սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման, գիտելիքների խորացմանն ու հարստացմանը: Այդ տեսանկյունով էլ սխալ կլիներ ճանաչողական հետաքրքրությունների ձեւավորումը սահմանափակել միայն ուսումնական աշխատանքի շրջանակներում, չէ որ դպրոցականի հարցասիրությունը, հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում նրա ամբողջ գործունեության բազմազան տեսակներում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առաջավոր ուսուցիչների որոնող ստեղծագործ միտքը զբաղված է նրանով, թե ինչպես հաղթահարել սովորողների որոշ մասի անտարբերությունն ուսման նկատմամբ, ինչպես կազմակերպել ուսուցման գործընթացը, որպեսզի աշակերտը ոչ միայն ընկալի հաղորդվող գիտելիքները, այլև սովորի խորհել, դատել, վերլուծել և ինքնուրույն հետևություններ կատարել: Ուստի, ուսուցիչների ստեղծագործական որոնումները պետք է ուղղված լինեն այն բանին, որպեսզի այդ նպատակի համար օգտագործվի սովորողների թե' ուսումնական և թե'

արտադասարանական գործունեությունների միասնությունը:

Ինչպես ուսուցման գործընթացը, այնպես էլ սովորողների արտադասարանական գործունեությունը պետք է առավելագույն չափով հագեցված լինի այնպիսի բազմաբնույթ ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներով, որ սովորողներին հրահրեն գիտելիքներով որոնելու դրված նպատակի իրագործման նոր, ավելի կատարելագործված ուղիներ, որոնք զարգացնում են նրանց ոչ միայն մտածողական ակտիվությունը, այլև կամային ջանքերը:

Քննարկվող հիմնահարցի հետ սերտորեն կապված, մեր կարծիքով, շատ հետաքրքիր ուսումնասիրություն է կատարել Էլադա Բաղդասարյանը [6], ով դասալսումների և ուսուցիչների առաջավոր փորձի ուսումնասիրության օրինակով ներկայացրել է արտադասարանական աշխատանքների պլանավորման ու կազմակերպման կարևորությունը դպրոցականների մոտ ուսուցումն ավելի արդյունավետ դարձնելու առումով (ուսումնասիրությունները կատարվել են հիմնականում Ստեփանակերտի թիվ 1, 2, 7, 8, 9 դպրոցներում):

Եղիշե Չարենցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցիչ Ս. Հովհաննիսյանը աշխարհագրությամբ առավել հետաքրքրվող դպրոցականներից կազմակերպում է խմբագրական կոլեգիա՝ ընդգրկելով նաև գրական ստեղծագործական հակում ունեցող աշակերտների: Աշակերտների հետ միասին որոշվում է ամիսը մեկ կամ երկու անգամ լույս ընծայել «Պատանի բնախույզ», «Պատանի աշխարհագետ» խորագրով պատի թերթ և տարբեր համարներով բովանդակել հետևյալ նյութեր՝ «Հայաստանի Հանրապետության, Սփյուռքի, Արցախի, Ռուսաստանում բնակվող հայկական համայնքների բնակչության աշխարհագրությունը», «ՀՀ գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման ճյուղերը», «Հետաքրքրաշարժ տեղեկություններ», «Մեր հին ու նոր սովորությունները» և այլ նյութեր:

Հանձնարարվում էր աշակերտներին տարբեր սկզբնաղբյուրներից, թերթերից, ամսագրերից և այլ նյութերից համեմատությունների միջոցով որոնել ու ճշգրտել հայ բնակչության աճը, նյութական ռեսուրսների զարգացումը հայկական համայնքներում: Ուշագրավ էր հատկապես պատի թերթում տպագրված աշխարհագրական էքսկուրսիայի արդյունքները ընդհանրացնող աշակերտների ստեղծագործական

շարադրությունները: Թերթում տպագրվում են աշխարհագրական հարց ու պատասխանների խորագիր՝ «Մեր հարցերը», «Մեր հարցերը լինում են թեմատիկ և ազատ» .-«խնդրվում է հարցերի պատասխաններն ընթեռնելի ձեռագրերով, մաքուր հայերենով և գրագետ գրել ու գցել թերթի փոստարկղիկը, հարցերին լավագույն պատասխանողները պետք է խրախուսվեն, պարգևատրվեն գովասանագրերով խմբակի կողմից»:

Սովորողների ճանաչողական ունակությունները պետք է զարգանան այնպես, որ նրանք ոչ միայն կարողանան ճանաչել իրականությունը, այլև որոշակի նորություն մտցնեն իրականության մասին եղած ըմբռնումների, հասկացությունների մեջ: Ստեղծագործական աշխատանքը սովորողից պահանջում է խոր ու կայուն գիտելիքներ, հոգևոր ուժերի լարում, ստացած գիտելիքները կյանքում կիրառելու ունակություններ, ակտիվ ուշադրություն և դժվարությունները հաղթահարելու մեծ կամք:

Արտադասարանական աշխատանքի տարածված ձևը առարկայական խմբակներն են, որոնք նպաստում են սովորողների ինքնուրույն մտավոր գործունեության զարգացմանը, գիտության նկատմամբ հետաքրքրությունների ձևավորմանը [20]: Խմբակի պարապմունքների ընթացքում աշակերտները ձեռք են բերում ինքնուրույն փորձեր դնելու, դիտումներ կատարելու հմտություններ: Օրինակ, դպրոցներում կենսաբանության, բուսաբանության արտադասարանական խմբակում սովորողները աճեցնում են գյուղատնտեսական բույսեր, խնամում կենդանիներ, պայքարում բույսերի վնասատուների դեմ և ուշադրություն դարձնում կենդանիների կենսաբանական առանձնահատկությունների, կյանքի օրինաչափություններին, բնության պահպանության միջոցառումներին և այլն [8]: Դրանով դպրոցը լուծում է իր առջև դրված գոյապահպանական, բնապահպանական, աշխատանքային դաստիարակության խնդիրները: Նման ինքնուրույն աշխատանքներ կատարելիս ակտիվանում է աշակերտների մտածողությունը:

Ուսուցիչները լայն հնարավորություն են ստեղծում սովորողների ինքնուրույն ստեղծագործական կարողությունների զարգացման համար ինչպես ուսուցման գործընթացում, այնպես էլ արտադասարանական գործունեության ընթացքում: «Պատանի բնասերների», «Պատանի պատմաբան» խմբակի անդամների ուժերով

ուսուցիչները հաճախակի կարող են կազմակերպել զանգվածային միջոցառումներ՝ ցերեկույթներ ու երեկույթներ, որտեղ կցուցադրեն հետաքրքիր փորձեր, հերբարիումներ, հնագիտական հավաքածուներ, լույս կընծայեն պատի թերթեր, որոնք բազմակողմանի տեղեկություն կհաղորդեն կենսաբանության պատմության նորագույն նվաճումների մասին [21]:

Հայաստանի Հանրապետության արտադպրոցական կրթության մասին օրենքը դեռևս նախագիծ է, սակայն այն Սահմանադրության և «Կրթության մասին» ՀՀ օրենքին համապատասխան սահմանում է Հայաստանի Հանրապետության արտադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, դրա իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպական և դաստիարակչական հիմքերը:

ԳԼՈՒԽ 2

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

Շրջակա միջավայրի հետ մարդու փոխհարաբերության խնդիրը կարող է լուծվել միայն բոլոր մարդկանց էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման, նրանց էկոլոգիական մշակույթի բարձրացման պայմաններում: Էկոլոգիական կրթության առումով դպրոցի դերը հաճախ սահմանափակվում է միայն սովորողներին ձևական տեղեկատվության հաղորդմամբ: Կրտսեր դպրոցում էկոլոգիական կրթության ծրագրի հիմնական բաղադրիչները հետևյալն են՝

- շրջակա աշխարհի ճանաչումը (արտաքին աշխարհ),
- ինքնաճանաչումը (ներաշխարհ):

Շրջակա միջավայրի, բնության երևույթների ճանաչողության գործընթացն կրտսեր դպրոցում սկսվում է որոշակի առարկայական հասկացությունների ոլորտ նրա օբյեկտների և երևույթների փոխանցմամբ: Զուգահեռաբար էկոլոգիական

կրթության բովանդակության յուրացման հետ միաժամանակ, շարունակվում է սովորողների էկոլոգիական գործունեության և էկոլոգիական վարքի ձևավորմանը նպատակաուղղված աշխատանքը: Դրանցից մենք կարևորում ենք արտադասարանային տարբերակված ուսուցումը: Այս գործընթացում հատուկ ուշադրություն պետք է դարձնել սովորողների էկոլոգիական գիտակցության ձևավորմանը, որն իրականացվում է մի քանի փուլով՝ որոշակի հոգեկան գործընթացներից ընթանալով դեպի էկոլոգիական հիշողություն, էկոլոգիական մտածողություն, ընկալում, երևակայություն և այլն, դեպի բնաճանաչողական հետաքրքրություններ, բնապահպանական, վերարտադրողական ակտիվություն, ապա էկոլոգիական մշակույթի մակարդակի ախտորոշում և զարգացում:

Կրթության՝ ավագ նախադպրոցական և կրտսեր դպրոցական փուլի համար կրթության բնագավառներ կարող են լինել մաթեմատիկան, լեզուն, ինֆորմատիկան, կերպարվեստը, «Ես և ինձ շրջապատող աշխարհը», գեղարվեստական աշխատանքը, էկոլոգիան (տարրական գիտելիքներ շրջակա միջավայրի մասին), ֆիզիկական դաստիարակությունը:

Էկոլոգիայի տարրական դասընթացը հետաքրքրաշարժ աշխույժ մեթոդների և դիդակտիկ ու շարժուն խաղային ձևերով երեխաներին կտա այն հարցերի պատասխանները իմանալու հնարավորություն, որոնք բխում են այսօրվա էկոլոգիական իրավիճակից:

Կրտսեր դպրոցում դասավանդվող առարկաները բովանդակային առումով նույնպես պարունակում են էկոլոգիական տարրական գիտելիքներ, սակայն արտադասարանական պարապմունքները այստեղ ունեն իրենց ուրույն տեղը: Ընդհանրապես նշված առարկաներում միջառարկայական կապերը արտահայտվում են գիտելիքների փոխներթափանցմամբ:

Օրինակ՝ մայրենիի արտադասարանական դասընթացում ներառված են՝

- բնության երևույթներ,
- տարվա եղանակներ,
- բույսերի տեսակներ
- կենդանիների տեսակներ
- ծառատունկ (ինչով և ինչպես է կատարվում այն),

- օգնություն բույսերին, կենդանիներին, նրանց խնամքը,

«Ես եւ ինձ շրջապատող աշխարհը» առարկայի ուսուցման գործընթացում կարելի է ներկայացնել առաջադրանքներ, որոնք կարելի է իրականացնել դասերից դուրս.

1. Ընդհանուր պատկերացումներ տիեզերքի մասին.

ա) Արեգակնային համակարգը, նրա կառուցվածքը:

բ) Արևի ազդեցությունը կենդանի օրգանիզմների, մարդու վրա:

դ) Պատկերացումներ ժամանակի մասին՝ անցյալ, ներկա, ապագա: Օր, ամիս, տարի, դար:

ե) Ժամանակի չափման մեխանիզմներ:

2. Մեր տունը Երկիր մոլորակն է.

ա) Երկիրը արեգակնային համակարգի մոլորակ է.

բ) Երկրի պտույտը իր շուրջը.

գ) Երկրի պտույտը Արեգակի շուրջը.

դ) Ընդհանուր պատկերացումներ Երկրի կառուցվածքի մասին:

ե) Մթնոլորտը Երկրի օդային թաղանթն է: Մթնոլորտային երևույթներ: Եղանակ, նրա փոփոխման պատճառները: Օդի նշանակությունը կենդանի օրգանիզմների եւ մարդկանց համար: Օդի պահպանությունը:

զ) Երկրի ջրային թաղանթը: Ջրի նշանակությունը կենդանի օրգանիզմների համար: Ինչպես է մարդը օգտագործում ջուրը: Ջրի պահպանությունը:

է) Երկրի կենդանի թաղանթը՝ կենսոլորտ: Կենսոլորտը և նրա սահմանները: Կենդանի օրգանիզմների բազմաձևությունը եւ դրանց պահպանությունը:

Երրորդ դասարանում շրջակա միջավայրի մասին տեղեկատվություն ստանալու համար Լ. Ասատրյանը նպատակահարմար է համարում մշակել հետևյալ արտադասարանական նյութը, որը, կարծում ենք, հասանելի է այդ տարիքի երեխաներին [2]:

1. Ի՞նչն է որոշում մարդու տեղը բնության մեջ.

ա) մարդու և բնության ներդաշնակությունը,

բ) մարդու ապրելակերպի տարբերությունը կենդանի այլ օրգանիզմների կենսակերպից,

գ) ի՞նչ պետք է իմանա մարդը և ինչպե՞ս պետք է պահպանի բնությունը:

2. Կենդանի օրգանիզմների բազմաձևությունը.

ա) բույսերի և կենդանիների նմանությունները և տարբերությունները,

բ) բույսերի բազմաձևությունը,

գ) կենդանիների բազմաձևությունը,

դ) բույսերի և կենդանիների նշանակությունը բնության մեջ և մարդու կյանքում,

ե) բնակության միջավայր,

զ) կենդանի օրգանիզմների հարմարումը բնակության վայրին,

է) բնական համակեցություններ (մարգագետին, անտառ, ջրամբար):

«Բնություն» առարկայի շրջանակներում արտադասարանական պարապմունքների ժամանակ աշակերտների հետ կարելի է ուսումնասիրել հետևյալ թեմաները.

1. Մենք և շրջակա բնությունը՝ կենդանի բնությանը վերաբերող հասկացությունների ձևավորում և զարգացում:

2. Տիեզերքը և մենք՝ հասկացությունների ու դատողությունների ձևավորում և զարգացում:

3. Երկիր մոլորակի մակերևույթը՝ աշխարհագրական, երկրագիտական հասկացությունների և գիտելիքների զարգացում:

4. Երկրի օդային հագուստը՝ կենսաբանական հասկացությունների ձևավորում և զարգացում:

5. Մեզ ծնող հողը՝ լեզվական կարողությունների և բառապաշարի զարգացում:

6. Ջուրը երկրի վրա՝ էկոլոգիական աշխարհայացքի ձևավորում:

7. Կենդանի մոլորակ՝ էկոլոգիական մշակույթի ձևավորում:

Այսօր նշակալիորեն էկոլոգիականացվել են դպրոցում դասավանդվող բոլոր բնագիտական և կենսաբանական առարկաները (բնագիտությունը, կենսաբանությունը, աշխարհագրությունը, քիմիան, ֆիզիկան և այլն: Ներկայումս ՀՀ-ում բավականին աշխատանքներ են տարվում դպրոցականների էկոլոգիական կրթության բովանդակության կատարելագործման, նրա ճանաչողական, արժեքային, նորմատիվային, բարոյագեղագիտական, տնտեսահրավագիտական, բաղադրիչների որոշակիացման ուղղությամբ:

Էկոլոգիական գիտելիքների և գիտակցության ձևավորման գործընթացի հիմքը էկոլոգիական հասկացություններն են: Հատկապես հիմնական դպրոցում է ձևավորվում էկոլոգիական հասկացությունների համակարգը՝ միջավայրի, նրա գործոնների, օրգանիզմների, էկոհամակարգերի, կենսաերկրացենոզի, պոպուլյացիաների, տեսակների, սնման շղթաների, դրանց փոխադարձ կապերի և զարգացման օրինաչափությունների վերաբերյալ: Սրանց թվին են պատկանում պարտքի, պատասխանատվության կատեգորիաները, որոնք արտահայտում են անձի սոցիալական բարոյաիրավական վերաբերմունքը, պատասխանատվությունն ու պարտականությունները հասարակության և շրջակա միջավայրի նկատմամբ:

Բնագիտական առարկաների դասերին էկոլոգիական կրթության պրակտիկայում նպատակահարմար է ուսուցման բոլոր ձևերի համադրումը: Շրջակա միջավայրի հարցերը հուզում են շատերին, իսկ դա նշանակում է հնարավորություն տալ սովորողներին միավորվելու այդ հիմնախնդրի շուրջ: Այն իր մեջ ներառում է՝

1. ***Գործնական աշխատանքների*** միջոցով էկոլոգիական կրթության հիմնական նպատակների ու խնդիրների, ինչպես նաև էկոլոգիական աշխարհայացքի սկզբունքների իրացումը, որը կատարվում է հետևյալ միջոցներով՝

- դպրոցի միասնական էկոլոգիական կրթական դաշտի,
- միջնառարկայական կապերի կիրառման և ուսումնական առարկաների էկոլոգիականացման,
- համայնքի շրջակա միջավայրի վիճակի գնահատման ուղղությամբ սովորողների պրակտիկ գործունեության և նրանց կողմից բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի նորմերի ու կանոնների յուրացման,
- ուսումնական և արտաուսումնական պարապմունքների փոխադարձ կապի միջոցով:

Էկոլոգիական գիտելիքների խորացումը հիմնական դպրոցում իրականացվում է

- ✓ դաշտային պրակտիկայի,
- ✓ ճանաչողական աշխատանքների,
- ✓ արտադասարանական, համադպրոցական միջոցառումների միջոցով

2. Էկոլոգիական կրթությունը դպրոցում պետք է իրականացվի ***բնագիտական ցիկլի առարկաների բազայի վրա*** և շարունակական բնույթ կրի՝ սկսած

տարրական դպրոցից և շարունակվի հիմնական ու ավագ դպրոցներում:

Սովորողների արտաուսումնական, արտադպրոցական գործունեության հիմնական ձևերն են՝ խմբակները, պրակտիկումները, սեմինարները, համաժողովները, նախասիրական պարապմունքները, ուսումնական էքսկուրսիաները, տնային ինքնուրույն աշխատանքները: Նշվածներից շատերն այսօր հավակնում են դառնալու ուսումնական աշխատանքների կազմակերպման ձևերը: Մեր հետազոտության առումով էկոլոգիական կրթության կազմակերպման հիմնական ձևերն են խմբակները, նախասիրական պարապմունքները, ուսումնական էքսկուրսիաները, տնային ինքնուրույն աշխատանքները:

Բացի խմբակներից կարևորվում են նաև՝

1. Էկոլոգիական տոները՝ թռչնի օր, ծաղկի տոն, միասնական ծառատունկ, շրջակա միջավայրի օր:

2. Էկոլոգիական խաղերը զարգացնում են էկոլոգիական գիտելիքների մակարդակը, խթանում են սովորողների դրդապատճառային, հետաքրքրությունների և հուզական ոլորտը՝ բնության պահպանության մանկական նախագծերի մրցույթ, շրջակա միջավայրի պահպանությանը նվիրված սիրողական ֆիլմերի մրցույթ, խաչբառերի մրցույթ, էկոլոգիական վիկտորինա:

3. Դերային խաղեր՝ էկոլոգիական գործունեության սոցիալական բովանդակության մոդելավորում, էկոլոգիական փորձագիտություն:

4. Էկոլոգիական հոգեբանական թրեյնինգ՝ անձի էկոլոգիական-բարոյական աշխարհայացքի համալիր ձևավորում՝ հիմնված սոցիալական հոգեբանության և անձի հոգեբանության վրա՝ անձի էկոլոգիական դիրքորոշումներ, բնության հետ գիտակցված փոխհարաբերությունների ձևավորում բնության օբյեկտների հետ շփման հնարավորությունների զարգացման միջոցով:

Սովորողների էկոլոգիական գիտելիքների ձևավորման գործում մեծ դեր են խաղում բույսերի, կենդանիների, ջրոլորտի, բուսական և կենդանական աշխարհի մասին տարբեր հեռուստահաղորդումները:

Էկոլոգիական կրթության բովանդակությունը իրականացվում է ոչ միայն բնագիտություն, կենսաբանություն առարկաների, այլև աշխարհագրություն առարկայի միջոցով: Ժամանակակից աշխարհագրության դասընթացի

վերակառուցվող ծրագրերում արտացոլված է ամբողջ դասընթացի կառուցվածքը. յուրաքանչյուր մասը ավարտվում է էկոլոգիական վերլուծությամբ:

Անհրաժեշտ է նաև նշել, որ դպրոցական աշխարհագրության էկոլոգիականացման մեջ առաջատար նշանակություն է տրվում մարդուն շրջապատող միջավայրի պահպանման և վերականգնման, ռացիոնալ բնօգտագործման հարցերին:

Ավագ դպրոցականների էկոլոգիական պատրաստության մակարդակի բարձրացման առաջնային գործոնը էկոլոգիական կրթությունն է, որն իրականացվում է ուսումնական առարկաների՝ կենսաբանության, աշխարհագրության, քիմիայի, ֆիզիկայի, գրականության և այլ առարկաների միջոցով:

Հաջորդ գործոնը բնության, շրջակա միջավայրի ուսումնասիրման բնապահպանական, արտաուսումնական, արտադպրոցական աշխատանքներն են պատանի բնասերների, ինչպես և բնապահպանական հատուկ խմբերում, ընկերություններում և ակումբներում:

Ուսուցման ձևերը ավագ դպրոցում համապատասխանաբար դասակարգվում են ըստ անհատական, խմբային, կոլեկտիվ, դասարանական, արտադասարանական, դպրոցական, լրացուցիչ, արտադպրոցական, հիմնական և ոչ հիմնական ձևերի:

Մեր հետազոտությունը արտաուսումնական խմբակներում (այդ թվում էկոլոգիական ուղղվածության) մեծ մասամբ ընդգրկվում են հիմնական դպրոցի աշակերտները, իսկ ավագ դպրոցականները մեծ ընտրողականությամբ են վերաբերվում այդ խմբակներին: Դպրոցականների բնաճանաչողական ընդունակությունների և բնապահպանական կարողությունների զարգացումը էկոլոգիական կրթության խնդիրներից մեկն է և այն պետք է հենվի դասերի և ինքնակրթության ընթացքում նրանց ստացած տեսական գիտելիքների վրա:

Այդ խնդիրը կարող է իր արդյունավետ լուծումը ստանալ սովորողների արտաուսումնական աշխատանքներում՝ խմբակներում, ակումբներում, էկոլոգիական ճամբարներում: Իհարկե, էկոլոգիական բովանդակությամբ արտաուսումնական, արտադպրոցական միջոցառումները կազմակերպելիս պետք է հաշվի առնել սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Կրտսեր և դեռահաս դպրոցականներին հասանելի և

հետաքրքիր են թռչնաբների պատրաստումը, կենդանիների խնամքը, բույսերի աճեցումը, խնամքը և այլն: Ավագ դպրոցականները կարող են կատարել ավելի բարդ աշխատանք, օրինակ՝ դպրոցի բակի լանդշաֆտի պլանի կազմումը, դպրոցի շրջապատում թփերի, ծաղկանոցների տնկման, ձևավորման սխեմաների մշակումը, էկոլոգիական տոների, էկոլոգիական խաղերի սցենարի կազմումը և այլն:

ԳԼՈՒԽ 3

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկայի ծրագիր իր մեջ չի կարող ընդգրկել այն բոլոր գիտելիքների հիմունքներն ու հասկացությունները, որոնք աշակերտները պետք է ստանան տվյալ ուսումնական առարկայից: Ծրագրերում տրվում է այն ամենահիմնականը, որն անհրաժեշտ է տվյալ առարկայից ընդհանուր գաղափար տալու համար, կամ գիտելիքների այն նվազագույնը, որը սահմանվում է պետական չափորոշիչի կողմից, մնացածն աշակերտները ձեռք են բերում ինքնուրույնաբար՝ շրջապատից ու գրքերից: Այս առումով բավականին բարդ է դպրոցում դասավանդվող «աշխարհագրություն» առարկայի վիճակը: Վիճակից դուրս գալու միակ և հիմնավոր ելքը արտադասարանական աշխատանքների կատարումն է:

Աշխարհագրության ուսուցման գործընթացում պահանջվում է կատարել արտադասարանական բազմաբնույթ աշխատանքներ [19]: Աշխատանքներ, որոնք նպաստելու են հարստացնելու և ամրապնդելու աշակերտների գիտելիքների պաշարը, ընդլայնելու նրանց մտահորիզոնը, ինքնուրույնությունը, գործնական հմտությունները, ընդարձակելու նրանց հետաքրքրությունների շրջանակները՝ ամուր հիմք ստեղծելով սովորած գիտելիքները մտապահելու և գործնականում կիրառելու համար:

Դպրոցում դասավանդվող «աշխարհագրություն» առարկայի գիտելիքների հիմնական աղբյուրը դասագրքերն ու քարտեզներն են, բայց քանի որ դպրոցում

սովորող աշակերտների հետաքրքրությունները աշխարհագրության նկատմամբ անընդհատ ավելանում են և դառնում ցանկություն՝ ավելի ու ավելի խորը թափանցելու աշխարհագրական երևույթների մեջ, ճանաչել աշխարհն իր բազում գաղտնիքներով, դասագրքերի շարադրված նյութը ի վիճակի չէ բավարարելու նրանց հետաքրքրությունները, ուստի աշխարհագրության ուսուցիչը պարտավոր է արտադասարանային աշխատանքների միջոցով լրացնել այդ բացը: Սա է պատճառը, որ փորձված մանկավարժները նման դեպքերում կազմակերպում են արտադասարանային բազմաբնույթ ու բազմաբովանդակ պարապմունքներ:

Արտասադարանային աշխատանքները կազմակերպվում են հիմնականում նրանց համար, ովքեր աշխարհագրական գիտության նկատմամբ ցուցաբերում են մեծ հետաքրքրություն: Այս դեպքում անհրաժեշտություն է զգացվում կրթության մակարդակը բարձրացնելու համար զուգակցել դասարանական և արտադասարանական աշխատանքները: Արտադասարանային պարապմունքներն իրենց բովանդակությամբ պետք է կապված լինեն դասարանային աշխատանքների ու ծրագրային նյութերի հետ: Այս դեպքում միայն այդպիսի աշխատանքները հատուկ արժեք կստանան, կդառնան նպատակային ու արդյունավետ, հանդես կգան որպես ուսումնական աշխատանքի բաղադրիչ մասերից մեկը [17]:

Այդպիսի աշխատանքը դպրոցական աշխարհագրության դասընթացը կապում է բնության ու կյանքի հետ, թարմություն ու կենդանություն հաղորդում նրան: Սակայն դրա հետ միասին արտադասարանային աշխատանքն էլ իր հերթին հենվում է դասարանային աշխատանքի վրա, օգտագործում է այն գիտելիքներն ու տեղեկությունները, որոնք աշակերտները ձեռք են բերում դասի ընթացքում: Այլ կերպ ասած, դրանք գտնվում են սերտ փոխկապակցության մեջ: Արտադասարանական աշխատանքի կազմակերպման ձևերը բավականին բազմազան են ու բազմաբովանդակ: Նշենք մի քանիսը.

1. Աշխարհագրական խմբակի ստեղծում (կազմակերպում):
2. Աշխարհագրական էքսկուրսիաներ:
3. Կամերալ աշխատանք (աշխարհագրական խմբակի միջոցով աշխարհագրական բնույթի գրքերի քննարկում, նյութերի հավաքում, վիճակագրական տվյալների մշակում ն զեկուցումների կազմում):

4. Հայրենագիտական աշխատանքների կազմակերպում (իր բնակավայրի, արտադրական և ոչ արտադրական ձեռնարկությունների, պատմական հուշարձանների ուսումնասիրություն և բնութագրերի կազմում)։

5. Աշխարհագրական հրապարակում և օդերևութաբանական կայանում աշխատանքների կազմակերպում։

6. Հարց ու պատասխանի, զանազան բնույթի ցերեկույթների կազմակերպում։

7. Պատի թերթի լույս ընծայում։

Դպրոցականների արտադասարանական աշխատանքի կազմակերպման հիմնական նպատակներից մեկը հանդիսանում է հայրենի երկրի ուսումնասիրումը. հայրենագիտական աշխատանքների կազմակերպումը [21]: Այս աշխատանքով պետք է զբաղվեն դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների գծով գործող արտադասարանական խմբակները, այդ թվում նաև աշխարհագրական խմբակը, պարզ է, որ հայրենի երկրի բնության, բնակչության, տնտեսության պատմական հուշարձանների, կուլտուրական կյանքի ուսումնասիրությունը առատ նյութ է տալիս աշխարհագրության բոլոր դասընթացներից դասարանական, արտադասարանական աշխատանքների կազմակերպման համար։

Աշխարհագրության ուսուցչի ղեկավարած խմբակի անդամները էքսկուրսիաների ժամանակ՝ բնության գրկում, աշխարհագրական հրապարակում, օդերևութաբանական կայանում, արտադրական ձեռնարկությունում հայրենագիտական ուսումնասիրությունները կատարում են կանոնավոր դիտումների, գրառումների և հնարավորության դեպքում նաև նկարահանումների ձևով։ Բացի այդ, նրանց հանձնարարվում է կարդալ նաև հայրենի երկրի բնության մասին եղած գրականությունը, հավաքել զանազան աղբյուրներից նրա վերաբերյալ եղած նկարները և զանազան նյութեր։ Եվ այս ամենը օգտագործելով՝ պատրաստում են նկարագրություններ, տպավորություններ, հետազոտական բնույթի փոքրիկ հոդվածներ, կազմում են անհատական ու ընդհանուր ալբոմներ, ուր զետեղում են հայրենի երկրի լեռները, լճերը, գետերը, ճանապարհները, արտադրության արտադրամասերը, թողարկված արտադրական նմուշների նկարները և այլն։

Աշխարհագրության դասընթացի համար առատ նյութ կարող են տալ հայրենի երկրի ապրելակերպի ու կենցաղի, տնտեսության, մշակույթի, պատմական անցյալի

ու արդիական կյանքի ուսումնասիրությանը նվիրված արտադասարանական աշխատանքները [19]: Այսպիսով՝ այն հայրենագիտական աշխատանքը, որ ուսուցչի ղեկավարությամբ կատարում են դպրոցի աշխարհագրական խմբակի անդամները, օգտակար ու շնորհալի գործ է, դրանք աշակերտներին պատում են հայրենասիրական ջերմ զգացումով, ամրացնում, խորացնում ու ընդլայնում են նրանց ունեցած գիտելիքները, տեղեկություններն ու պատկերացումները, նրանց մեջ պատվաստում են ինքնուրույն հետազոտական աշխատանքի ունակություններ, սովորածը գործնականում կիրառելու հմտություններ, աշխարհագրության ուսուցումը կապում են շրջապատի կյանքի հետ: Սակայն, որպեսզի հայրենի երկրի բազմակողմանի ուսումնասիրումը լինի արգասավոր ու ծառայի իր նպատակին, աշխարհագրության խմբակը պետք է համագործակցի այլ առարկաների արտադասարանական խմբակների հետ: Դա լայն հնարավորություն կտա դպրոցականներին համատեղ հայրենագիտական աշխատանքների միջոցով հետազոտելու հայրենի երկրի բնությունը, բնակչությունը, տնտեսությունը, նյութական ու հոգեոր արժեքները, պատմական անցյալն ու ներկա կյանքը և ստացված արդյունքներն օգտագործելու դասարանային և արտադասարանային աշխատանքների ժամանակ [17]:

Բոլոր տիպի արտադասարանային աշխատանքների արդյունքները կարելի է ամփոփել պարբերաբար հրատարակվող «Պատանի աշխարհագետ» պատի թերթում:

Էքսկուրսիան նույնպես ուսուցման կազմակերպման արտադասարանային ձև է, որը կազմակերպվում է ուսումնասիրման օբյեկտի գտնվելու վայրում՝ դրա անմիջական ճանաչման և հետազոտման նպատակով:

Ուսումնասիրման օբյեկտ կարող են լինել՝ բնական համալիրներն ու դրանց առանձին բաղադրատարրերը, արդյունաբերական ձեռնարկությունները, ոչ արտադրական ոլորտի հիմնարկները, գիտության և մշակույթի օջախները, հարևան դպրոցները: Էքսկուրսիոն աշխատանքը միավորում է դպրոցական ուսուցման գործընթացն ու իրական կյանքը, օգնում է աշակերտներին ծանոթանալ ուսումնասիրվող երևույթին նրա բնական վիճակում ու բնական միջավայրում: Աշակերտների մոտ կուտակվում են պատկերավոր գիտելիքներ բնական և տնտեսական օբյեկտների վերաբերյալ, ինչը հիմք է հանդիսանում հիմնական

աշխարհագրական հասկացությունների ձևավորման համար: Կատարելագործվում են տեղանքում հետազոտություն կատարելու կարողությունը, ձևավորվում են տարածական պատկերացումներ հեռավորությունների, ռելիեֆի ձևերի ու չափերի հորիզոնի կողմերի և այլնի վերաբերյալ: Հատկապես կարևոր է էքսկուրսիաների դերը շրջակա միջավայրի վերաբերյալ հուզարժեքային վերաբերմունքի ձևավորման գործում: Դրանց ընթացքում սովորողները տեսնում են, թե ինչպես է օգտագործվում բնությունը, ինչպես է այն պահպանվում, ինչ փոփոխություններ է կրում անթրոպոգեն գործունեության ազդեցության ներքո: Էքսկուրսիաների արդյունքում էմպիրիկ նյութ է կուտակվում ուսումնական բանավեճերի և սեմինարների կազմակերպման համար:

Աշխարհագրական էքսկուրսիաները տարբերվում են այլ առարկայական էքսկուրսիաներից: Աշխարհագրական էքսկուրսիաների ընթացքում աշակերտները աշխատում են հատակագծով, քարտեզով, սարքերով և այլն: Էքսկուրսիա դեպի բնություն կազմակերպվում է դրա տարրերի (երկրի մակերևույթի ձևերը, ջրերը, հողերը, բուսական և կենդանական աշխարհը) և համալիրների ուսումնասիրման, ինչպես նաև մարդու տնտեսական գործունեության հետևանքների ուսումնասիրման նպատակով:

Էքսկուրսիա դեպի արտադրություն՝ սա արդյունաբերական, գյուղատնտեսական ձեռնարկությունների և ոչ արտադրական ոլորտի հիմնարկների այցելումն է: Դրանցում մեծ ուշադրություն են դարձնում հիմնարկի արտադրական հարաբերություններին, հումքային և էներգետիկ բազային, սպառողների հետ առկա կապերին, կարևորվում են տեղն ու դերը տեղական և համաշխարհային տնտեսության մեջ: Դպրոցական ուսուցման շրջանակներում տարածված են կինո- և տեսա-էքսկուրսիաները մայրցամաքներով, երկրներով և հեռավոր տեսարժան վայրերով: Համակարգչային տեխնոլոգիաների զարգացման հետ կապված՝ առաջացել է էքսկուրսիայի նոր տեսակ՝ ինտերակտիվ էքսկուրսիա, դրանք իրենց տեղն են գտել նոր սերնդի մուլտիմեդիական դասագրքերում և զբաղեցնում են դասագրքի առանձին բաժին:

Էքսկուրսիան արդյունավետ անցկացնելու համար անհրաժեշտ է լրջորեն դրան նախապատրաստվել: Նախ պետք է ընտրել էքսկուրսիայի անցկացման վայրն ու օբյեկտը, հաշվի առնելով շրջակա միջավայրի պայմանները, արդյունաբերական

ձեռնարկությունների առկայությունը, աշակերտների կյանքի փորձը: Էքսկուրսիայի օբյեկտի և վայրի ընտրությունը պետք է համապատասխանի ուսումնասիրվող դասընթացի նպատակին և խնդիրներին:

Էքսկուրսիան արդյունավետ անցկացնելու համար անհրաժեշտ է լրջորեն դրան նախապատրաստվել: Նախ պետք է ընտրել էքսկուրսիայի անցկացման վայրն ու օբյեկտը, հաշվի առնելով շրջակա միջավայրի պայմանները, արդյունաբերական ձեռնարկությունների առկայությունը, աշակերտների կյանքի փորձը: Էքսկուրսիայի օբյեկտի և վայրի ընտրությունը պետք է համապատասխանի ուսումնասիրվող դասընթացի նպատակին և խնդիրներին:

Բնության գրկում կազմակերպվող էքսկուրսիայի համար ընտրվում են տարածքներ, որոնք համապատասխանում են հետևյալ պահանջներին՝

- պետք է լինի բազմազան ֆիզիկաաշխարհագրական տեսանկյունից և տիպիկ տվյալ բնական զոնայի համար,
- ունենա ուսումնասիրման համար մատչելի ռելիեֆ, ապարաշերտերի մերկացումներ, բազմազան հողաբուսական ծածկ, ջրային օբյեկտներ (գետեր կամ գետակներ, աղբյուրներ, լճեր կամ լճակներ և այլն),
- լինի հեշտ անցանելի. ընտրելով տեղանքը, ուսուցիչը պետք է այն նախապես ուսումնասիրի, ընտրի հիմնական դիտակետերը, որոշի անվտանգ և հետաքրքիր երթուղին, ձևակերպի նյութի բովանդակությունը, աշակերտի ուսումնական գործունեության տեսակները ուսումնասիրման մեթոդները, հնարավորության դեպքում հրավիրի նեղ մասնագետի:

Տնտեսական օբյեկտի ընտրության համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ պայմանները՝

- օբյեկտի մասին գիտելիքները պետք է հիմք հանդիսանան տնտեսաաշխարհագրական հասկացությունների ձևավորման համար,
- ցանկալի է, որ ձեռնարկությունը պատկանի երկրի տնտեսության մասնագիտացված ճյուղերին,
- արտադրության տեխնոլոգիական պրոցեսները պետք է հասու լինեն աշակերտի ընկալմանը,
- նմանատիպ էքսկուրսիաների համար նպատակահարմար է ընտրել այնպիսի

ձեռնարկություններ, որոնք օգտագործում են տեղական բնական ռեսուրսները:

Էքսկուրսիային մասնակցելու, դրա նպատակից բխող խնդիրները կատարելու համար աշակերտները պետք է պատրաստ լինեն տեսականորեն (վերհիշեն այն անհրաժեշտ հասկացությունները, որոնք կօգնեն ձևավորել նոր գիտելիքներ), գործնականորեն (տիրապետեն անհրաժեշտ կարողությունների, օրինակ հատակագծից, քարտեզից, սարքերից և սարքավորումներից օգտվելը, նյութի հավաքի, խմբավորման, հետագայում ցուցադրման եղանակները), ինչպես նաև քաջատեղյակ լինեն կազմակերպչական հարցերին:

Ինտերակտիվ դասերի անցկացումը արտադասարանական պարապմունքների ժամանակ ավելի արդյունավետ է դառնում և այդ թեմաների տեղադրման, ուսուցման, հնարքների կիրառման համար պատրաստում են տեսադասեր, որոնք նույնպես, ինչ-որ տեղ, իրենցից ներկայացնում են ինտերակտիվ դասերի օրինակներ:

էկոկրթության արտադասարանական պարապմունքների ժամանակ ուսուցիչները կարող են օգտվել նաև ինտերակտիվ ֆլեշ խաղերից, օրինակ՝ «Վերականգնվո՞ղ է, թե՞ չվերականգնվող», «Ռեսուրսներ բոլորի համար», «Վերականգնվող ռեսուրսներ», «Փաթեթավորում», «Կենսաբազմազանություն», «Կյանքը Կարմիր գրքում» և այլն [7]: Ներկայացնենք մի այդպիսի էկոլոգիական դասի պլան-կոնսպեկտ, որը կարելի է անցկացնել դպրոցում արտադասարանական պարապմունքների ժամանակ:

Ռեսուրսներ բոլորի համար

7-րդ դասարան

Այս դասի ընթացում աշակերտները խաղում են խաղ, որը ցույց է տալիս վերականգնվող և չվերականգնվող ռեսուրսների միջև տարբերությունը:

Նպատակը: Աշակերտներր պետք է հասկանան վերականգնվող և չվերականգնվող ռեսուրսների օգտագործման տարբերությունը:

Անհրաժեշտ պարագաներ.

- գրատախտակ և կավիճ
- 200գ տարբեր տեսակի կոնֆետներ
- մեծ տարա

- 28 փոքր թղթեր

Դասի ընթացքը

Չվերականգնվող ռեսուրսներ

1. Չորս փոքր թղթերի վրա նշել «I սերունդ», 8 հատ «II սերունդ» և 16 հատ «III սերունդ»: Դնել թղթերը պարկի մեջ:
2. Մի մեծ աման լցնել 200գ կոնֆետներով:
3. Աշակերտները վերցնում են մեկական թուղթ: Նրանցից ոչ մեկը չպետք է ասի, թե ինչ է գրված թղթի վրա: Աշակերտներին տալ մեկական պարկ և բացատրել, որ պարկերը ցուցադրության մի մասն են կազմում:
4. I սերնդի աշակերտները մոտենում են կոնֆետներով լի տարային: Բացատրել, որ այս ուտելիքն իրենից ներկայացնում է չվերականգնվող ռեսուրսի պաշար: Ասել նրանց, որ նրանք կարող են վերցնել այնքան, ինչքան ուզում են:
5. Երբ առաջին սերնդի աշակերտները ավարտեն լցնելը, կանչել երկրորդ սերնդի չորս աշակերտների, որպեսզի նրանք վերցնեն մնացած կոնֆետներից այնքան, ինչքան մնացել է:
6. Քննարկել աշակերտների հետ, թե ի՞նչ պատահեց կոնֆետի համաշխարհային պաշարի հետ: Ի՞նչ պատահեց ռեսուրսի ամբողջական քանակի հետ, ինչքա՞ն մնաց յուրաքանչյուր հաջորդ սերնդին: Արդյո՞ք 4-րդ սերնդի համար որևէ բան մնաց: Արդյո՞ք աշակերտներից որևէ մեկը մտածում է նրանց մասին, ովքեր իրենցից հետո ուտելու են կամ փորձելու են որևէ քանակությամբ կոնֆետ գտնել:
7. Ի՞նչ կապ են տեսնում աշակերտները տեղի ունեցած խաղի ու իրական կյանքում տեղի ունեցածի միջև:

Ծանոթություն: *Աշակերտները կարող են ուտել այնքան կոնֆետ, ինչքան կարող են՝ առանց մտածելու, թե ովքեր են գալու իրենցից հետո: Երբ 3-րդ սերնդի աշակերտները ավարտեն, 4-րդի համար քիչ կոնֆետ կմնա կամ ընդհանրապես չի մնա: Եթե նույնիսկ աշակերտները շատ չուտեն, ապա նրանք կուտեն ինչ-որ քանակությամբ կոնֆետ և այդ դեպքում էլ 4-րդի համար ավե քիչ կմնա: Աշակերտները պետք է հասկանան, որ նրանք ինչքան շատ լինեն, այնքան ավելի քիչ ռեսուրս կմնա կամ էլ ոչինչ չի մնա հաջորդ սերնդի համար:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով աշխատանքը, կարող ենք եզրակացնել.

1. Դպրոցականների արտադասարանական գործունեությունը նրանց այնպիսի գործողությունների ամբողջությունն է, որտեղ կրթական հաստատության հիմնական ծրագրի հետ մեկտեղ, որոշվում են դաստիարակության խնդիրները, հետաքրքրությունների զարգացումը, համընդհանուր ուսումնական գործողությունների ձևավորումը։
2. Յուրաքանչյուր արտադասարանական աշխատանք ուղղված է ոչ թե աշխարհագրական գիտելիքների ճշգրտության ստուգմանը, այլ աշխարհայացքի ընդլայնմանը, ինքնուրույն աշխատանքի հմտությունների կիրառմանը։
3. Արտադասարանական աշխատանքները սովորողների մոտ զարգացնում են աշխարհագրական հետաքրքրությունները, հնարամտությունը, ճանաչողական ինքնագործունեությունը, ձևավորում են մասնագիտական ուղղվածություն, ընդլայնում են աշխարհայացքը, սովորողների գիտելիքները, մտավոր կարողությունները, սովորեցնում են դիտողականություն, օգնում են ավելի խորը հասկանալ առանձին երևույթների և գործընթացների էությունը։
4. Աշխարհագրության ինտեգրացիոն կապերը հնարավորություն են տալիս անցկացնել միջառարկայական արտադասարանական պարապմունքներ, որոնք ղեկավարվում են աշխարհագետների կողմից։ Էկոլոգիական ինտեգրված դասերը միջառարկայական համագործակցության ապահովման դեպքում կապ են ստեղծում աշխարհագրության, կենսաբանության, քիմիայի միջև։
5. Դասապրոցեսին էկոլոգիական կրթություն տալուց բացի, անհրաժեշտ է նաև արտադասարանական աշխատանքների ժամանակ զբաղվել երեխաների մոտ շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարություն սերմանելով։
6. Արտադասարանական աշխատանքների մեջ կարևոր տեղ են գրավում դաս-էքսկուրսիաները, որոնք բարձրացնում են դասի արդյունավետությունը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադամյան Նելլի, Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ,Գյումրի, 2018թ, 263 էջ
2. Ասատրյան Լ. Թ., Էկոլոգիական կրթության կառավորման հիմունքները, Երևան, 2006, 334 էջ
3. Աղայան Ղ., Խորհրդածություններ դաստիարակության վրա, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1950թ., էջ 344
4. Գյուլազյան Վ., Առուշանյան Լ., Գասպարյան Մ., Ուսուցչի ուղեցույց տետր, Օրվա դասի պլան, Երևան, 2009թ.
5. Եդոյան Ռ. Հ., Հովակիմյան Ժ. Հ., Բնապահպանության դասավանդման մեթոդիկայի և լաբորատոր, գործնական պարապմունքների ձեռնարկ, Երևան, 2010թ.
6. Էլլադա Բաղդասարյան, Սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը արտադասարանական աշխատանքների գործընթացում (ուսուցչի առաջավոր փորձը), Երևան, 2008թ.
7. Էկոկրթության ուսումնաօժանդակ ձեռնարկ, Ծրագրի ղեկավար՝ Լևոն Մարտիրոսյան, Գյումրի, 2006թ., 86 էջ
8. Թադևոսյան Ռոզա, Արտադասարանական աշխատանքների կազմակերպումը դպրոցում կենսաբանության ուսուցման գործընթացում, ՈՒԳՀ–ի նյութեր, Գյումրի, 2012թ.
9. Կանեցյան Գ., Դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը բարձրագույն ուսումնական հաստատություններում, Գիտություն և տեխնիկա, Երևան, 2007թ.
10. ՀՀ օրենքը կրթության մասին՝ ընդունված Ազգային ժողովի կողմից 1999 թ. 14 ապրիլի, 30.03.2018
11. Մանուկյան Մ. Մ., Արտադասարանական դաստիարակչական աշխատանքի առանձնահատկությունները, Երևան, 1980թ., էջ 7-8
12. Մինասյան Ա. Ա., Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա, Երևան, 2013թ, 343 էջ
13. Մինասյան Ա. Ա., Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները,

Երևան, 2011, 95 էջ
14. Մինասյան Ա. Ա., Միջառարկայական կապերի իրացման դասեր, Երևան, 2008թ.
15. Մյագկովա Ա. Ն., Կոմիսարով Բ. Դ., Ընդհանուր կենսաբանության ուսուցման մեթոդիկա, Երևան, 1976թ, 542 էջ
16. Շչուկինա Գ. Ի., Մանկավարժություն, Երևան, 1969թ., էջ 349:
17. Սարգսյան Խաչիկ, Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2002թ, 320 էջ
18. Սվաճյան Պ. Կ., Ստեփանյան Ս. Գ., Կենսաբանության ուսուցման մեթոդիկա, Երևան, 1978, 242 էջ
19. Баринова И.И. Внеурочная работа по географии, Москва, 1988, 157 с.
20. Калечиц Т.Н., Кейлина З.А. Внеклассная и внешкольная работа с учащимися, Москва, 1980, 119 с.
21. Ксибаева Ольга Ивановна, Внеклассная работа по географии, Москва, 2008
22. https://hy.wikipedia.org/wiki/
23. https://nsportal.ru/nachalnaya-shkola/materialy-mo/2012/12/16/vneurochnaya-deyatelnost-vidy-formy-organizatsii
24. sanchursk.ucoz.ru/Documents/